ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» օգոստոսի 2021թ. № 144-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Անուշ Կարենի Կնյազյանի կողմից Վահան Ռուբենի Ռշտունուն տրված լիազորագրի հիման վրա ներկայացված դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Անուշ Կարենի Կնյազյանին սեփականության իրավունքով պատկանող 06-009-0102-0011 կադաստրային ծածկագրով 0.71546 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք երրորդ կարգի խոտհարքը, փոխադրել նույն գնահատման խմբի երրորդ կարգի գյուղատնտեսական ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 12
գ. Լոռի Բերդ